

ՄԵՆԿ

Տարեկան 10 րուբլի, կես տարվան 6 րուբլ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Կեռ երկուսը սկիզբն է.— ՆԵՐԻՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՆԸ. Նամակ վաղեկակազմից. Նամակ զա-
մարուից. Ներքին լուրեր.— ՍՐԱՍԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՆԸ. վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիւր-
քիայից. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՆԻ.—
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱՆՆԸ. Ինչն է հրապարակում.

ԴԵՆ ԵՐԿՈՒՆԻՔԻ ՍԿԻԶԲՆ Է

Կիւլոմատիական թանաքի մի ամբողջ
հեղեղ թափելուց յետոյ, եւրօպական դիպ-
լոմատիկան հանգստանում է այժմ իր յաղ-
թութեան դափնիների վրա: Ֆրանսիական
պատգամաւորների ժողովի նիստերը փակ-
վելին մինստարութեան տարած փայլուն
պարլամենտական յաղթութիւնից յետոյ և
պարլամենտը, 200 ձայների բազմութեամբ,
հաւանութիւն տուեց շահուտային արեւելեան
քաղաքականութեան, որը, մինստարի կար-
ծիքով, ստիպեց սուլթանին խոնարհվել
Եւրօպայի կամքի առաջ և ընդունել թե-
սալիական սահմանադրի մասին դեպի
նրի կայացրած որոշումը: Այժմ ամենքը
հանգստացած են. կրիտիկական շրջանը
համարվում է անցած և արեւելեան ճիւղա-
ժամի դժուարութիւնները բաւական հարթ-
ված, որովհետեւ սուլթանը, գոնէ առ այժմ,
թղթի վրա, համաձայնվել թողնել թեաւ-
լիան: Հոգ չէ, եթէ բազմաշարքը Կրետէ
կղզին դեռ զենքը ձեռքին կուռն է իր
բռնաբարձած մարդկային նաւիրական իրա-
ւունքների համար, մի րոպէ հանգստու-
թիւն չէ գտնուել, քրիստոնեաների և մու-
սուլմանների մէջ արեւմտահեղ պայքարը չէ
մերժանում. հոգ չէ, եթէ Հայաստան-
ում սոսկալի թշուառութիւն է տիրում,
ինչպէս այս օրերս պաշտօնապէս յայտարա-
րեց այդ մասին կրթութեան անդիական պար-
լամենտում: Գոնէ այն էլ լաւ է, որ այլ

ևս տեղի չեն ունենում հայերի խմբովին
ջարդեր, կոտորածներ, որ այլ ևս չեն լըս-
վում հարիւր հազար գոհերի հառաչանքը
և ողբը...
Սակայն եւրօպական դիպլոմատիան յոյս
ունի, և հաւատում է, որ կարող է մօտ
ապագայում խաղաղութիւնը վերականգնել
Արեւելքում: Յունաստանի և Թիւրքիայի մէջ
հաշտութիւնը կայացնելուց յետոյ, նա մը-
տադիր է զիմեջ միւս խնդիրների լուծման,
հերթով: Առաջ պէտք է կանոնաւորել
կրետական հարցը, մտնել ինքնավարու-
թիւն կրետեում, իսկ յետոյ զբաղվել Թիւր-
քիայի մէջ ընդհանուր քեֆօրմներ մտնե-
լու խնդրով: Հայոց հարցի մասին էլ խօսք
չը կայ. նա համարվում է լուծված, Թիւր-
քիայի կողմից այն պատճառով, որ «փըր-
կարար քեֆօրմները» արդէն գործադրվել
և մտցրվել են, իսկ Եւրօպայի կողմից՝ այն
պատճառով, որ հայերի հետ միասին
Թիւրքիայի միւս քրիստոնեայ ազգութիւն-
ներն էլ սպասում են եթէ ոչ ապագա-
թեան, գոնէ իրանց դուռն փնտրել թեթե-
ւացման:

Սակայն, որքան էլ ուրախալի լինի
Թիւրքիայական հաշտութեան կնքումը,
որը դեռ չէ էլ իրականացնել, դժուար թէ
նրանով լուծվի արեւելեան հարցի ճշնա-
ժամը: Եւրօպան, ինչպէս շատ ձիւղ նկա-
ռում է մայրաքաղաքի լրագրողներից մէկը,
չէ կարող հանգստանալ դափնիների վրա:
Հանուտայի լաւատեսութիւնը վաղաժամ է,
որովհետեւ Թիւրքիայական հաշտութիւ-
նը կայացած համարելով հանդերձ, «մեք
չը պէտք է մոռանանք, որ արեւելեան հար-
ցը առաջվայ պէս կանգնած է իբրեւ մի
խորհրդաւոր սփիւնը եւրօպական դիպլո-
մատիայի առաջ: Մինչև որ բողոքաշարք
կրետէ կղզում կը մնայ մի հատ թիւրք
զինուոր, մինչև որ կը ծածանի այդ կղզու
վրա կիսարեւելի գրոշակը, դժուար թէ

կղզին խաղաղի և հանգստանայ: Հայերի
ամենաարդար պահանջներն դեռ գոհացում
չէ տրվել և նրանց ամենալաւ զաւակների
արիւնը դեռ վրէժխնդրութիւն է գոչում:
Եթէ նրանց բողոքները չը հասան Եւրօ-
պային, խնայալով թեաւիական սահման-
ների վրա եղած որոտումներից և զէնքի
շառաչից, այժմ երբ հաշտութիւնը ստորա-
գրված է, կուտուրական ազգերը իրաւունք
չունեն անտես առնել հարստահարված ժո-
ղովրդի ողբերը...
Եթէ արեւելեան բաղամկնձիւ հարցի
լուծումը առաջ էլ մեծ դժուարութիւննե-
րի էր բաղկում, այժմ այդ դժուարու-
թիւնների վրա աւելացել է և այն անձ-
նապատասխանութիւնը ու գոռոզութիւնը,
որոնցով համակվել են Թիւրքաց կառա-
վարական շրջանները, պետական անձինք
և նոյն իսկ ժողովուրդը՝ Թիւրքական զէն-
քի վերջին յաղթութիւններից յետոյ: Ար-
քան էլ այդ յաղթութիւնները անշահ
են, որքան նրանք տարված են մի պիղ-
մէյի դէմ, ինչպիսին է Յունաստանը, այ-
նու ամենայնիւ, ահա ինչ մտքեր են ներ-
շնում նրանք Թիւրքերին: «Իզգամ» և
«Սաբա» լրագրողների մէջ հրատարակված
է հետեւեալ յօդուածը, որ համարվում է
բարձրից ներշնչված. «Յոյների հետ ունե-
ցած պատերազմը ապացուցեց ամբողջ աշ-
խարհին մեր ֆինանսական և զինուորական
գոյութիւնը: Մինչև այժմ Եւրօպան ճա-
նաչում էր մեր զօրքերը միայն մեր թըշ-
նամիւններից բղձած կեղծ աղբիւրների հի-
ման վրա, այժմ նա պէտք է փոխի իր
կարծիքը և ոչ որ այլ ևս չի հերքել, որ
մեր հռչակը շատ բարձրացել է: Մենք
հպարտ ենք մեր ոյժով»:

Իր ապագայ գործունէութեան մէջ եւ-
րօպական դիպլոմատիան, որ ինքը նպատակ
այդ ինքնահաւանութեան և անձնապատ-
ասխանութեան զարգացման թիւրքերի մէջ,

պէտք է դեռ շատ արգելքների բաղկով,
ուստի և բոլորովին սխալ չի լինի ասել,
թէ երկուսը ոչ թէ վերջանում է, ինչ-
պէս կարծում են շատերը, այլ դեռ նոր է
սկսվում:

ՆԵՐԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՂԵԿԱԿԱԶՄԻՑ
Յուլիսի 10 ին
Արդեօք վաղեկակազմի հայերը կարգացին
«Մշակի» 79-ի մէջ թէ ինչպէս է Ախալքալա-
քի աղբառ հասարակութիւնը օգնում հայ գաղ-
թականներին: Իսկ եթէ շատերը կարգացին,
գոնէ ուշադրութիւն դարձրին արդեօք նեւեալ
նախադասութեան վրա. «Գոմարկեց (Բարեգոր-
ծական ընկերութեան) արտակարգ ընդհանուր
ժողով, որին ներկայ էին մօտ 30 անդամներ և
որը ընտրեց մի յանձնաժողով՝ գաղթականների
մասին հոգալու գործում վարկութեան օգնելու
համար»: Արդեօք մեր հարուստ հայերը գոնէ
մտքից անցրին, թէ հարկաւոր է օրինակ վերց-
նել Ախալքալաքից: Եւ չեմ համարձակվի ասել,
թէ վաղեկակազմի հայերը բոլորովին չեն օգ-
նում գաղթականներին, բայց նրանց արած օգ-
նութիւնը անշահ է: Հարկ եմ համարում շատ
զեպեքից գոնէ մի օրինակ բերել: Ամառվայ
սկզբից խումբ խումբ գալիս են մեզ մօտ գաղ-
թականներ, որոնք մի երկու օր վաղեկակազ-
մում մնալուց յետոյ, ուղևորվում են դէպի Պե-
տրոպոլ, Արմաւիր և Նոր-Նախիջևան: Մինչև
այժմ վաղեկակազմից անցել են մօտ 100 գաղ-
թականներ: Վաղեկակազմում գաղթականներին
օգնութիւն տալու և նրանց երկաթուղով ճանա-
պարհ գցելու համար մեր երէցները սրանից դեռ
մի ամիս առաջ, կառավարութեան թոյլտու-
թեամբ հաւաքել էր 210 ր. 10 կոպէկ: Որովհե-
տեւ երկաթուղին այդ գաղթականներին, ինչպէս

ԲԱՆԱՍԻՐԱՆ

ԻՆՉ Է ՀՐԱՊՈՒՐՈՒՄ
(Բազուի կեանքից)

Բազուն այնպիսի հոշակ է ստացել թէ ամ-
բողջ կովկասում և թէ կովկասից դուրս երկր-
ներում, որ ամեն մի մարդ այդ անունը լսելիս
ուրիշ բան չէ կարողանում երևակայել, եթէ ոչ
միող, հարստութիւն: Բազուի տեղական հանգա-
մանքներին անձանթը, ըստ երևոյթի, հաւա-
տացած է, թէ Բազուն Աւետեայ մի նոր երկիր
է, որ ընկնողը շատ հեշտութեամբ իրան նիւ-
թականապէս կապահովէ: Այդ հաւատն ու քաղցր
երազն է այն շարժառիթը, որ ամենայն տարի
հազարատու մարդիկ է քշում դէպի մեր նախա-
քաղաքը: Գալիս են ամեն կողմից և ամեն տե-
սակ մարդիկ. կապիտալիստներ, մասնագէտներ,
ինտելիգենտներ, մանրավաճառներ, արհեստա-
ւորներ և բանուորներ: Գալիս են գործ սկսելու,
ձեռնարկութիւններ անելու, ուրիշ խօսքով գա-
լիս են հարստանալու և չլուստ հարստանալու
համար: Բայց ինչ վախճանի է հասցնում այդ-
պիսիներին արդեօք արեւելեան այս խոշոր կենտ-
րօնի բաղամկոզմանի կեանքը:

Կապիտալիստները չանցնում են: Չը կայ մի
օրինակ, որ մէկը որոշ կապիտալով եկած լինի
տեղը, գործ սկսած ու շնորհակալ: Մի բանի հա-
զար րուբլի դրամագլխով գործ ձեռնարկողը,
լինի դա մանրավաճառութիւն թէ նախալի
որևէ ձեռնարկութիւն, մի երկու տարվայ ըն-
թացքում, համարեա կրկնապատկուի և եռապատ-
կուի է իր դրամագլխը: Կեռ սա սովորական

հանգամանքներում: Բայց յաճախ կրկնվում են
և բացառիկ հանգամանքներ, որոնք առանց որ
և է առևտրական նախաձեռնութեան, պատա-
հաբար, տանեակ հազարների, նոյն իսկ հարիւր
հազարների տէր են դարձնում մարդկանց: Այդ-
պիսի բախտաւոր դէպքերն են նախ Ֆոն-
տանները և մասամբ նաւթաւոր հողերի առե-
տուրը: Կիցուր 10—15 հազար բուբլի դրամա-
գլխով մի քանի մարդիկ ընկերութիւն են կազ-
մում և նախ թիւ հոր են փորում: Զօրեքը, ընդ-
հանրապէս, չուտ թէ ոչ նախ թիւ են տալիս,
ծածկում են իրանց ծախսը և կրկնապատիկ,
եռապատիկ օգուտ տալիս, մանաւանդ եթէ
նախ թիւ լաւ զին ունին: Բացառութիւններ չա-
տակաւ են տեղի ունենում: Իսկ երբ այդ տե-
սակ հորերից ֆոնտան է խփում և օրեկան
100, 500, 700 հազար պուգ նախ տալիս, պարզ
բան է, որ 10—15 հազար ունեցողը մի քանի
շաբաթից, մի քանի ամիսից յետոյ դառնում է
տանեակ հազարների, հարիւր հազարների տէր:
Այդպէս է և հողի առևտուրը: Կեստատինը
500—1000 րուբլով վաճառվող հողը, եթէ միայն
նախ թիւ հնաք է ցոյց տալիս, արժէ տանեակ
հազարներ. օրինակներ որքան կամենաք: Կան
մարդիկ, նոյն իսկ համեառ ուժիկով ծառայող-
ներ, որոնք գեստատինը 50—100—200 րուբլով
հողեր են գնել մի տարի առաջ. այսօր այդ
տեսակ հողերի գեստատինը վաճառվում է
1000—8000 րուբլով: Կապիտալը, ուրեմն, ա-
ռատ և բազմակողմանի գործադրութիւն է գը-
նում և լաւ արդիւնք տալիս: Հետեալքը զանա-
զան կողմերից թափվող կապիտալիստների ար-
շաւանքը հանկանալի է:

Հասկանալի է և մասնագէտների ու ինտելի-
գէտների հոսանքը: Կրանք իրանց ձեռք բե-
րած գիտութիւնը չեն կարողանում գործադրել

ուրիշ տեղերում. Բազուից դուրս այդպիսիների
համար կամ բոլորովին գործ չը կայ, կամ եղածն
էլ շատ սուղ է, ուստի հարկադրված են գալ
այստեղ գործ, պաշտօն որոնելու: Շուտ թէ
ուշ, զբաղը պաշտօն ու տեղ գտնում են: Այս-
քանն էլ բաւական է հոսանքի առաջը բաց պա-
մեծ մեծամասնութեան, այն է բանուորների, արհես-
տաւորների զլխապատու վրա թափվելը: Այս
մարդկանց վրա են ծանրանում կեանք մաշող
բոլոր չարքաշութիւնները, նաւթահանքերի և
գործարանների շահ աշխատանքը: Եւ ինչ է
չանում, ինչ վարձատրութիւն է ստանում հա-
րիւրաւոր վերստնելու եկած գիւղացի—բանու-
րը: Ամառկան 15 րուբլի, իսկ փոքրիկը, մի
քանի տարի ծառայելուց յետոյ՝ 20—25 րուբլի:
Ամառկան 20—25 ր. ուժիկ ստանալը, ճիշդ է,
մեծ համբաւ է գիւղացու, ինչպէս համար,
որը տարիների ընթացքում շատ քիչ անգամ է
փողի երես տեսնում: Հոշակը մեծ է, գալթակ-
ղեցուցիչ, բայց թէ չպանդխտացած գիւղա-
ցին որպիսի զրկանքներով է ձեռք բերում այդ
15—25 րուբլին, ինչ տանջանքներ է կրում,
վտանգների քանի տեսակներին է ենթարկված,
ինչ կորուստներ է ունենում, այդ ամենը, տա-
րաբաղաւոր, անկեղծ է մնում՝ գիւղական հե-
ռու շրջաններում:

Ընդհանրապէս վերցրած՝ գիւղերից եկածնե-
րը որոնք բանուորութիւն են անում այստեղ,
կորցնում են իրանց թաւրութիւնը, մաշվում,
տառորվում են ֆիզիկապէս և դառնում են կը-
մախքաման, մեքենայացած արարած: Հարկա-
ւոր է դիտել, հետեւ և ապա գաղափար կազ-
մել, թէ ինչ աստիճան աշխատկութիւն, քայքայ-
վում է բանուորը: Նրա խոր ընկած աչքերը, աչ-
քած ու զեղնած դէմքը արտաքին նշաններն

են. մեծամասնութիւնը տանջվում է ոսկրացա-
ւից, ոտների ուռուցքից և ներքին զանազան
հիւանդութիւններից: Խոնաւ, բորբոսած բնա-
կարանների ծնունդ ոսկրացաւը մի կողմից,
թաւր և անդաւոր կերակուրի պակասութիւնից
առաջացած ստամոքսային հիւանդութիւնները
միւս կողմից, միասնապէս աշխատանքի ծանրու-
թիւնը՝ չարուսակ ոտի վրա կանգնելը, ոտով
անդաւոր սեղմելը և այլն երբեք կողմից,
բոլորովին ոսկրացրել, սեղմել են երբեմն ա-
ռույգ, կարմրաթշիկ, «տղամարդ» գիւղացուն:
Այդ կորացած ու չորացած արարածներին տան-
ջող չարիքներից մէկն էլ վնասական հիւան-
դութիւնն է, որ, համարեա առանց բացառու-
թեան, տարածված է բոլորի մէջ: Յաճախ ամօ-
թից բժշկի չը դիմելով կամ համեստաբար
հիւանդութիւնը թաղցնելով և կամ իրանց լսած
ու իմացած «տնային» միջոցները գործ դնելով,
այն դրութիւնն է ստեղծվում, որ հիւանդութիւնը
ստանում է անուրի կերպարանք և գերեզման է
տանում: Մի քանի այդպիսի դժբաղդ դէպքերի
ակնաստես եմ եղել եւ ինքս: Երկու տարի ա-
ռաջ այստեղ երկու գիւղացի, հօրեղբոր որդիք,
միասին ծառայում էին: Երկուսն էլ ամուսնա-
ցած էին: Կին, երեխաներ ունէին գիւղում:
Ինչպէս պատում էին, գիւղում ունէին 400
գլուխ ոչխար, տաւար, վարեհաճօրեք և այլն.
մի խօսքով ապրուստի միջոց կար, բայց եկել
էին քաղաք, որովհետեւ այստեղ աւելի լաւ էր...
Նրանք հիւանդացան վնասական ախտով: Եր-
կար ժամանակ թաղցնելով ուրիշներից, հարկա-
դրվեցան խոստովանել այն ժամանակ միայն,
երբ արդէն բանը բանից անցել էր: Տարեկան
հիւանդանոց. այնտեղ եւ բաւական ժամանակ
տանջվելուց յետոյ՝ երկուսն էլ մեռան... Նոյ-
նանման օրինակներ անթիւ են: Ան քաղաքի և

Ն. Դաւթեան:

Հին-Նախնական թմբուկի գիւղից մեզ գրում են. «Այսօր յունիսի 15-ից սկսած եղանակը անցնում էր խիստ անոթ և չոր. մինչև 390 բարձրացաւ չորը: Սակայն վերջերս բացվել է անձրևները և ամառը, օդը բարձրացան զարմանալիս է դարձել, ամեն բանի է ժամկետին է: Գարին ծախում է պուրը 40—45 կ., ցորենը՝ 50—65 կ., ալիւրը՝ 75—80 կ. թանգ է միայն միսը—8 կ. ֆունտը»:

ՀԱՅԻՖԷՆԻ աւանից մեզ գրում են. «Բրաւոր գիւղի ընտանիք Բեգլար Յովհաննիսեանի ապօրինի կին պահելու յայտնի գործը վերջնականապէս ընկելը անցեալ օրը, հաշտարար դատարանում, օրինաւոր կին Մարիամ Յովհաննիսեանի բողոքի համաձայն, և որովհետեւ Բեգլար Յովհաննիսեան չէր կատարել հաշտարար դատարանին տուած իր խտառումը հեռացնելու իր տանից ապօրինի կին Մարգարիտին, ուստի դատարանը վճռեց. Բեգլար Յովհաննիսեանին և ապօրինի կին Մարգարիտ Գրիգորեանին ենթարկել բանտարկութեան ընդամենը, առաջինին 4 և վերջինին 2 ամիս ժամանակով: Պատիժը կրելուց յետոյ երկուսին էլ ենթարկել եկեղեցական ապաշխարութեան հոգևոր իշխանութեան միջոցով:

ԱԼԻՄԸԶԸԼ գիւղից (Ստրմալուի գաւառ) մեզ գրում են. «Ութ օր առաջ մի քիւրդ գիւղի տաւուտէր, Շարո անունով, իր որդու հետ կամենում է սպանել մի պարսկի, որ աջողութեամբ կարողանում է մի 10 քայլ հեռու իրանից և հրացանը պարսկում է, որի ձայնից իսկույն օգնութեան են հասնում սամահապատները և բռնելով ձօրն ու որդուն, բաւական ծնեկուց յետոյ յանձնում են Ալիտիւմ գանգաւ սամահապատների հարկաւարացեալ պ. Ստարուկին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՆԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս անգամ մեզ գրում են. «Յայտնի է, որ թիւրք կառավարութիւնը ֆինանսական մեծ ճգնաժամի մէջ է. այս զրուծիւնից ազատվելու համար ստիպւած է դիմել վճարական միջոցներին. լաւ համակարգում, որ զարգացնում էր մեծամեծ վնասներ տուեց իր լուսնադրոշմը, դրա տեղը լցնելու համար գաղութներին վրա եղած տուրքը ձգեց քիւրդերի վրա՝ յուսալով, որ այդպիսով գէթ կը կարողանայ մի ժամանակ պահպանել իր գոյութիւնը. քրդերը, որոնք համարեալ ինքնաշարժ, ինքնավար են կառավարվել մինչև այժմ, այդպիսի կարգադրութիւնը անտանելի պիտի համարէին և յարմար առիթի կը ըստնէին իրանց զգալիութիւնն արտայայտելու: Առիթը հետեւեալ կերպով ներկայացաւ Բ. Գուռը հրաման է արձակում Բաղէշի ալայքէզին և քրդերից հարկ է պահանջում. վերջինս էլ իր կողմից մարդիկ է ուղարկում Սօդկան գիւղաքաղաքի գալմաղալին, և ստիպում է, որ քրդերից հարկ հաւաքի, քրդերը, լսելով այս, կատաղաբար յարձակվում են գալմաղալի վրա, և սպանում նրան. կայմակի արագութեամբ այս լուրը Բաղէշ հասնելով՝ ալայքէզը վեց հարիւր զայեան, 12 իւնապետի և մի վաչա զօրքի հետ քրդերի դէմ է գնում, որոնց յեղապետին բռնում է և մի շարք տանջանքներ տալուց յետոյ՝ պահանջում է, որ անմիջապէս վճարեն որոշված հարկը. քրդերը, տեսնելով, որ ազատվել անհնար է՝ խոստանում են վճարել, բայց հէնց որ ազատվում են՝ տեղն ու տեղը սպանում են ալայքէզին. մնացած զինուորները փախչում են: Այս անակնկալ լուրը ամեն տեղ ահ ու սարսափ տարածեց. իսկոյն կանոնաւոր զինուորներից զնդեր կազմվեցան՝ քրդերի վրա յարձակում գործելու համար, բայց բարձրից եկած մի հեռագիր յետ կանգնեցրեց բոլորին. նորեկ քրդերի ասելով, այդ կողմերի բոլոր քրդերը՝ իրանց ինչքն ու ստացուածքը հայերին յանձնելով՝ լեռները քաշվեցան»:

ՆԱՍԱԿ ԹԻՒՐԻՒՄՅՈՒՆ

Կ. Պօլիս, յունիսի 30-ին

Եթէ չը կարգայի 62-դ թիւ «Մշակ» մէջ հանրածանօթ դաւաճան՝ Պարտիզալցի վաճան Տէր-Մինասեանի հրապարակ նետուած լրբերի թերթի մասին այն մէկ քանի տողերն՝ որ բաւական էին քիչ խօսքով նկարագրին ընելու այն-

պիսի անամօթ մէկու մը որ կը յանդգնէ վարդապետական սքեմն ալ կրելու իր վրայ, չը պիտի ընկաղորդէի այսօր այս տողերը գրելու և աւելորդ իսկ պիտի համարէի. բայց, որպէս զի աշխարհ արարատ իմանայ՝ թէ ինչ զձեռն միջոցներու կը դիմեն հանրային օգտին ծառայելու կոչուած և բարձր անուններու վրայ բազմած «մեծ մարդիկ», հարկ համարեցի այդ «իշխան» սրտի և գլխի արդիւնք՝ եղող «Լոյս» շաբաթթիւի հրատարակութեան թերես ձեռք անձանօթ մէկ պատճառն ի յայտ բերել:

Ամեն մարդ գիտէ թէ «Լոյս» կոչուած այդ խաւար թերթին ասկից առաջ ալ քանիցս հրատարակուեցաւ նոյն վաճան Տէր-Մինասեանի դաւաճանող խմբագրութեան ներքեւ: Գիտաբանական շմայեակ եպիսկոպոսի (այն ատեն վարդապետ) «Լոյսն» էր այդ նա վաճառեց վաճանին՝ որ սկսաւ նախ կրօնական խել մը ծանաղագիտութեան յօգուածներով զատ ու ան խաւար, յետոյ իր դաւաճան գոյը դուրս տալով, երես չգտաւ հանրութեանէն ու խափանուեցաւ: Յետոյ՝ իզմիրլեանի պատրիարքութեան ժամանակ՝ երբ վաճան Տէր-Մինասեան՝ աստիճանութեան նախորդ նախարար Նաղըմի անուիւնն տակ բռնեց դաժն էր, այս վերջինին թելագործութեամբ՝ որովհետեւ նիւթապէս ալ կը վարձատրուէր, սկսաւ վերստին հրապարակ հանել այդ գարշելի թերթը՝ միմիայն ամբաստանել հրատարակութիւններով նոյն ժամանակն ազգային վարչութիւնն և վարչութեան պետը՝ պատրիարքն անպատուելու և ժողովրդական միտքերը նոցա դէմ դնելու համար. սակայն այդ բանին մէջ ալ չի կրնալով յաջողել՝ «Լոյս» գաղութացեալ հրատարակութիւնն և սկսաւ ուրիշ պաշտօնի ձեռնարկել... գաղափար ստիճանութեան, եկեղեցական սքեմի տակ, պատրիարքարանի աչքին առջև...

Օրմանեան պատրիարք՝ ի վարձատրութիւն վաճան Տէր-Մինասեանի սոյն ծառայութիւններուն, իբրեւ հայր հոգեւոր և պաշտօնային այսպիսի անկեալ վարդապետներու, հարաբար փայտից ու պաշտպանեց եկեղեցւոյ քայքայիչ այդ ժիւր մշտնի, և ինչպէս գիտէ՞ք՝ առաջնորդու եկեղեցականներու կարգն անցուց, եկեղեցւոյ բնին հանեց, ուսկից հալածուած ու վտարուած էր մշտնջենապէս, և համով հոտով պատարագ մ'ալ ընել տուաւ՝ որով լուեկայն իմացուց ամենուն թէ՛ ախտն, ինչ ան իր աւուր թիւնն և րդո՞ւ ու եր են այս ան մեծ դուռը բարձր աղիկին դէմ, դուր ինքն՝ Օրմանեան, իբրեւ գործադրութիւն հայր, արժան տեսնել է հոտոտելու և Ազգն ալ մասնակցելու անոր հոտոյն զմայելելու... Պատճառ՝—հիմայ պիտի ըսեմ, և պիտի համոզուեմ թէ Օրմանեան, իբրեւ պատրիարք, իբրեւ Ազգին բարոյն և օգտին ծառայելու կոչուած բարձր անձնաւորութիւն, ինչ ամենագիտած է հետ մը կը պահէ իր վրայ... և, ո՛ր, որքան ունայնամիտ է իր բազմազան դսկա ու րաւ եր ու լը:

Վաճան Տէր-Մինասեան թիւնածու նշանակուած էր պատրիարքին հուշակաւոր տեղեկագրին մէջ Չարսանձախի առաջնորդական տեղապահութեան. նա չի գնաց, կամ, եթէ չի գնաց, կ'աղէք գիտնալ, նոյն իսկ պատրիարքը չ'ուզեց զրկել, վասն զի վերջին իմացաւ՝ թէ նա իր քովն և իրեն համար աւելի մեծ և օգտակար ծառայութիւններ կարող էր մատուցանել, ապա թէ ոչ՝ յայտնի ճշմարտութիւն մ'է որ, եթէ պատրիարքն ուզէր զրկել, Բ. Գուռն անմիջապէս նորա պաշտօնի պաշտոնւորուտուն (հրամանագրերը) կուտար, ուստի լաւագոյն համարեց Պօլիս թողուլ՝ բայց ոչ անպաշտօն, այլ իբրեւ քարոզիչ Գարակէճօրիկ թաղի եկեղեցւոյն, որ բոլոր պօլսեցի հայերուն համար մեծ ուխտատեղի է և ուր ամեն օր, մասնաւոր չինդաբար թիւրքեր, մայրաքաղաքի ամենահայ, այդ եկեղեցիին քարոզիչն է հիմայ, հորհրհիւ հայրական խնամուց Օրմանեանի, վաճան Տ. Մինասեան՝ որ իր ցոյի և խաղաղակ կեանքին մէջ՝ մոռցած բոլորովին հայ քրիստոնէի Աստուածը՝ տաճիկ Ալլահն ու նորա զըւսւլլահն սուլթանը (Աստուծոյ ստուեր) կը քարոզէ բազմաթիւ քերականող ուխտաւորներու...: Բայց Օրմանեանի սոյն խնամուտ վերաբերութիւնն առ վաճան Տէր-Մինասեանի՝ իշուր չէր. կար ու տակաւին կան խաղաղուելիք այլանդակ դերեր՝ զոր այդ մարդէն զատ ոչ ոք կարող էր կատարել. այն է, հրապարակաւ ցոյց տալ թուրք կառա-

վարութեանը՝ թէ հայոց արդէ պատրիարքն ինչպէս անձնուէր և հաւատարմի է օսմանեան գահուն, թէ որքան հակառակ է նա ազգային գործիչներու գաղափարներուն, և թէ որպիսի հիւսնալի բաղադրականութիւն մը ձեռք առած է՝ ու plus royaliste que le roi. միմիայն Օրմանեան պետութեան օգուտն ու շահը կը մտածէ: Այս տեսակ դերեր իր ձեռնաստուն վարդապետներուն գործը չէր կատարել, նոցա ժողովրդական խաւերու մէջ իրենց հոգեւոր ծնողին ձեռնակն ազգայնութիւնը քարոզելու կոչված են, նոցա պիտի զգացնեն ժողովուրդին՝ թէ պատրիարքը սրբազանն որքան անձնուրաց է, թէ գիշերներն երբեք քուն չունի, թէ օրերով անօթի կը մնայ և հայ ուսուիւ ժամանակ չի կըրնար գտնել՝ մտածելով Ազգին ուղի դժբախտ վիճակն, անտէր անտիրական բազմաթիւ որբերը, գաւառացիներուն դժուարին կացութիւնն հանդէպ թրքական ներկայ բաղադրականութեան, վիճակներու առանց առաջնորդի մնալն և այլն. բայց վաճան Տէր-Մինասեանի անունն ելած է, ամէն մարդ գիտէ թէ նա յայտնի դաւաճան մ'է, բոլորի մարդ է, և, մասնաւոր, լրբագրի մ'ալ արտօնատէրը լինելով, միակ անձն պէս ջատագովելու և սուլթանի աչքին առաջ փայլեցնելու նորա բռնած քաղաքականութիւնն: Անաւարկ նմոյշ մ'իւր հոտած սմուռակ թերթէն:

«...Շատեր մեղադրեցին այն ատեն (այսինքն 1895-ին երբ իզմիրեան պատրիարքի և նորա քաղաքականութեան դէմ կը բարբառէր) «Լոյս» թէ արդարադատ ուղղութեամբ չեն «Լոյս» գրուածները, այլ յետոյ որպէս զղջացան, երբ տեսան թէ ազգին մէջ և րկ երեսներ կան, որք առ չարաչառութեան, կընեն ինչ որ ընել պէտք չէ և չեն ընել ինչ որ ընելու է (պատրիարքն ալ այս խօսքն իր մէկ քարոզին մէջ ըսած էր անցեալները, կարծեմ Պօլսեանցի զաղիացի բեմադրանքն առնելով): Ազգը դաւաճանել և ազգասէր ձեռնալ (անշուշտ իրեն համար չեն այս խօսքերը), տէրութեան հաւատարիմ ձեռնալ, և տէրութիւնը նենգելու լրբութիւնն ունենալ, այս չէր միթէ այն ուղղութիւնն որ ունեցան այն անձերն՝ զորս «Լոյս» մատնանիլ ընելով խաղաղակցեց: Եւ հիմա անոնք են յերօպա, անոնք՝ որք վերադառնալով օսմանեան օրհնած հողէն, կը ընդադառնեն մեր սրբազան պատրիարքին քաղաքական ուղղութիւնը... Ի՛նչ ալ բաւական է, մեր ախնջները այլ ևս ծախու չեն երկրեւններու, չարաչառութեան շահատակներու: «Լոյս» քարոզութիւնն այս է... արդէ հայն իր պապեանական աւանդութիւնն ունի թէ ինքն է մասնէթ ու լաւ (Աստուծոյ աւանդ գրուած) սուլթաններու սուլթան ձեռնէթութեան (արքայութեան մէջ բնակող) Ֆաթիհ Սուլթան Մէհմեդ կայսեր: Ուրեմն հայն է փառաւորեալն ի փառս «Վառն դի Աստուած է ընդ նմա և նա մի սասանեցի յաւիտեան...» Այս չաւղէն ով որ չեղի, հայ չէ. ըստ Տէրմանի բանին՝ որդի կորստեան է: («Լոյս», թիւ 28, մայիս 31):

Երանի Օրմանեանին, որ վաճան Տէր Մինասեանի պէս ջատագով մ'ունի...

Գիւրգ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հաւաստի գործակալութեան հաղորդում են Կ. Պօլսից, յունիսի 4-ից. «Գիտականները նախազգուշացրին թէ վիթիւ-փախչում, որ եթէ մինչև յունիսի 3-ին կայանալու դեպքում կան խորհրդակցութիւնը Բ. Գուռը գոհացուցիչ պատասխան չը տայ, դեպքումները կարելի չի լինի կայացնել թիւրքերի վերաբերմամբ: Թէ վիթիւ-փախչան եկաւ դեպքումներին խորհրդակցութեան նիստի վերջում: Նրա գալը բոլորովին անակնկալ էր: Նա յայտնեց, որ իրան յանձնարարված է հաղորդել, թէ Բ. Գուռը ընդունում է դեպքումներին առաջարկութիւնները հաշտութեան կընդման մասին: Այդ փոփոխութիւնը, որ կարող է ապագայը լինել, թէ, յիշատի, մտադրութիւն կար ստիպողական միջոցներ գործ դնել, պէտք է վերադառնալ ամենից առաջ Գերմանիայի արած նոր քայլին: Վիթիւ-փախչի պատասխանը սուլթանի հետաքրքրին՝ մի քիչ երկղումն բնաւորութիւն ունէր և առիթ էր տուել սուլթանին կարծելու, թէ կարող է յայտ դնել Գերմանիայի աջակցու-

թեան վրա: Սակայն Գերմանիան, տեսնելով, որ միւս պետութիւնները վճռել են դիմել բռնի միջոցներին, և կամենալով դրա առաջն առնել, յանձնարարեց Ջաուրմա դեսպանին պաշտուած վճռական կերպով յայտնել, թէ թիւրքերն անպայման պէտք է համաձայնվի պետութիւնների վճռի հետ: Գրանից յետոյ թէ վիթիւ-փախչան եկաւ և վերոյիշեալ յայտարարութիւնն արեց»:

—Կ. Պօլսից հաղորդում են, որ նախկին մեծ վիզիր Ջաւադ փաշա պէտք է կրեալ քննաչան ընդունակ խմբակի փաշայի տեղը բռնելու համար: Շատերը կարծում են, որ այդ նոր պաշտօնը մի պատրուակ է Ջաւադ փաշային մայրաքաղաքից հեռացնելու համար: Սակայն նա զեռ մնում է և հաւանական է, որ մեծ պետութիւններից մէկը իր veto-ն է դրել: Բերլինի «Local Anz» լրագիրը յայտնում է, որ սուլթանն ինքն է անմիջապէս նշանակել Ջաւադ փաշային կրեալի ընդհանուր նահանգապետ: Ինչպէս յայտնի է, Ջաւադ փաշա պաշտօնակ եղաւ հայկական խռովութիւնների պատճառով: Անգլիայի ստիպմամբ՝ Նա շատ առանձնացած կեանք էր վարում իր տան մէջ, չը ջատագոված լրտեսներով, ստիպանութեան հսկողութեան տակ: Սուլթանը, առաջարկելով Ջաւադ փաշային կրեալի ընդհանուր-նահանգապետի պաշտօնը, պատճառաբանում է իր առաջարկութիւնը նրա նով, որ իբր նա միայն ընդունակ է վրկել այդ կղզին, որ թիւրքերի ձեռքից դուրս գալու վրա է արդէն:

—Անգլիական լրագիրները չարանակում են խտուրթեամբ քննել ամերիկական Միացեալ-Նահանգների կառավարութեան վարուեցող միջոցները: Շէրմանի հեռագրի առիթով: Լոնդոնի ամբողջ ժողովուրդը զրգուկած է, որովհետեւ Շէրմանի հեռագիրը ուղղակի մեղադրում է Անգլիային անազնութեան մէջ: «Times» լրագիրը ասում է, որ Շէրմանի հեռագրի միակ ցանկութիւնն է վատ գոյնով ցոյց տալ Անգլիան և յանդիմանել նրան անազնութեան մէջ, և այդ փորձը արված է չափազանց խիստ ձեռով և այնպիսի ոճով, որ երբեք իրան թոյլ չէր տայ ոչ մի եւրոպական միջնորդ, որը գիտէ յարգել իրան և իր երկիրը»:

—Պարիզից հեռագրում են «Daily News»-ին յունիսի 4-ից, որ այնտեղի թիւրքաց դեսպանատունը հաղորդել է «Երիտասարդ թիւրք» կուսակցութեան անգամներին, թէ սուլթանը հրատարակել է ընդհանուր ամիստիտ: Ամիստիտ տարածվում է բոլոր թիւրք հպատակներին վրա, որոնք թողել են երկիրը առանց անցադրի: Նըրանք պարտաւոր են 10 օրվա ընթացքում վերադառնալ թիւրքիս. հակառակ դեպքում նրանք կը կորցնեն նոյն իսկ իրանց ազգայնութիւնը և իրաւունք չեն ունենայ այլ ևս վերադառնալ Կ. Պօլիս:

—Նոյն լրագիրը հաղորդում է, որ «Մէշլէթ» լրագրի խմբագիր Ահմեդ Ռիշա տաացել է հրաւեր ներկայանալ դատարանի առաջ. նրան մեղադրում են, որ նա վիրաւորել է օտար տէրութեան միապետին, Աբդուլ Համիդին: Գառաջին անգամն է, որ Ֆրանսիայում գործ է արվելու օտար թագաւորին վիրաւորելու վերաբերեալ օրէնքը, որը մտցրած է մի քանի տարի առաջ:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիայում 1883 թիւն հինգիւն է մի ընկերութիւն եգիպտական հուսթիւնները պեղելու նպատակով: Այդ ընկերութիւնը վերջերս իր պեղումների ժամանակ աղբերի կոյտերի մէջ գտել է մի շատ հետաքրքրական, հին և թանկագին պատկերասրահներ, որոնք վերաբերում են իսկական հայկական ամբողջ աշխարհի համար, որովհետեւ նրա վրա գրված են լատինական, յունական, ղպտական և արաբական լեզուներով: Քրիստոսի գանազան ասացուածները: Այդ ասացուածներին մի մասը բուլղարիկ համաձայն է Ալեքսանդրի ասացուածներին, իսկ մի քանիսն էլ նորաթիւն են ներկայացնում: Գիտականներին կարծիքով, գտնված ձեռագիրները պատմական են Գիտաւոր ծնունդան երկրորդ դարին և կազմում են նրա ասացուածներին մի ժողովածուի կտորները:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍԻ ԳՐՈՒԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՆԼԳՐԱԿ, 14 յունիսի: Միջնորդ-նախագահը

